



հայաստան համահայկական հիմնադրամ  
The Armenia Fund



ԳՅՈՒՂԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ  
Rural Development Program

ԱՄՍԱԹԻՎ.  
ՈՒՄ ԿՈՂՄԻՑ.

Ապրիլի 18, 2008 թ.  
Գյուղական զարգացման ծրագրի  
գրասենյակ

ԽՈՐԱԳԻՐ.

«Հայաստան» համահայկական հիմնադրամի  
Գյուղական զարգացման ծրագրի շաբաթական  
գեկույց

Այս շաբաթվա գեկույցը կանդրադառնա Տավուշի մարզի Խաշթառակի միկրոշրջանի ենթակառուցվածքների վերականգնման երկու ծրագրերի ընթացքին: Այս ծրագրերը հանդիսանալու են Գյուղական զարգացման ծրագրի փորձնական միկրոշրջանի ենթակառուցվածքների զարգացման հիմնաքարերը եւ զուգահեռաբար իրականացվող ավելի փոքր ծրագրերի հետ հանդիսանում են շրջանի ընդհանուր զարգացման ռազմավարության բաղկացուցիչ մասերը:

### Այլ նորությունները հակիրճ՝

- Հինգշաբթի մեր աշխատանքային խումբը այցելեց Լոռու մարզի Գոգավան համայնք: Այցի նպատակն էր կովի գնման փոքր ծրագրի շահառու ընտանիքի որոշման համար համայնքային հանդիպման կազմակերպումը:
- Երկու ավտոմատ կթի ագրեգատները արդեն փոխանցվել են Շիրակի մարզի Սիգավետ եւ Սյունիքի մարզի Գորհայք համայնքների ֆերմերներին:

### Վաղվա ծրագրերն այսօր



Վերջին մի քանի գեկույցներում շատ ենք խոսել փոքր ծրագրերի մասին, որոնք արագ են իրականացվում եւ համեմատաբար ցածր ֆինանսական ներդրում են պահանջում: Այս ծրագրերը փոխում են տեղի բնակիչների կյանքը՝ ավելի լավ ապագայի հույս ներշնչելով նրանց: Միեւնույն ժամանակ առանց զուգահեռաբար իրականացվող մեծածավալ ծրագրերի, փոքր ծրագրերը միայն ժամանակավոր լուծում են տալու համայնքների բնակիչների խնդիրներին:

Համայնքային գրադարանին հանձնված համակարգիչը եւ DVD սկավառակները ինչքան էլ ուրախություն պարգևի գրադարան այցելող երեխաներին, միեւնույն է



այն չի կարող փոխարինել ժամանակակից չափանիշներին համապատասխան դպրոցը, որտեղ ամեն անգամ վազելիս չկա միջանցքի հատակի փոսերի մեջ ընկնելու վտանգը: Այդ է պատճառը, որ ենթակառուցվածքների վերականգնման ծրագրերը եղել են լինելու են Գյուղական զարգացման ծրագրի ամենագլխավոր խնդիրը: Փոխաբերական իմաստով եթե փոքր ծրագրերը թխվածքի զարդարանքն են, ապա ենթակառուցվածքները եւ տնտեսական ծրագրերը հենց թխվածքն են:



Այսօր Տավուշի մարզի փորձնական միկրոշրջանի հանդիսացող Խաշթառակի սահմանամերձ համայնքում արդեն վերանորոգվում է համայնքը բուժկետը: Այն կսպասարկի ոչ միայն Խաշթառակի համայնքի բնակիչներին, այլ հնարավորություն կունենա սպասարկել միկրոշրջանի մյուս հինգ համայնքները: Կառուցման աշխատանքները ընթանում են ըստ նախատեսված ժամանակացույցի եւ հույսով ենք, որ այն կհանձնվի օգտագործման արդեն օգոստոս ամսին:

Վերանորոգման աշխատանքներին մասնակցող բոլոր աշխատողները հավաքագրվել էին հարեւան սահմանամերձ գյուղերից: Սա մի քաղաքականություն է, որը մենք որդեգրելու ենք նաեւ մեր ապագա բոլոր ծրագրերում: Բազմաթիվ որակյալ մասնագետներ են բնակվում այս

շրջաններում: Սա այն ներուժն է, որը պետք է մա գյուղերում եւ մենք պետք է բոլոր հնարավոր միջոցներով օգնենք նրանց աշխատանք գտնել եւ եկամուտ վաստակել, որպեսզի նրանք պարտավորված չլինեն հայրենի գյուղը քաղաքում կամ Ռուսաստանում աշխատանք գտնելու համար: Այս ծրագիրը իրականացվում է Հիմնադրամի Նիդեռլանդների հանձնախմբի շնորհիվ, որը այս ծրագրի շուրջ միավորեց Նիդեռլանդների հայ համայնքի եւ կառավարության ջանքերը:

Այս շաբաթ մեկ այլ ծրագիր մեկնարկեց Խաշթառակի համայնքում. հայտարարվեց համայնքի դպրոցի շինարարության մրցույթը: Այս ծրագիրը իրականացվելու է Հիմնադրամի Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Շվեյցարիայի մասնաճյուղերի եւ Գերմանիայի հայ ձեռնարկատերերի ասոցիացիայի շնորհիվ: Այս ծրագիրը բուժկետի վերանորոգման ծրագրի հետ միասին կենտրոնացված լուծում կտա սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման այս խնդիրն:





Միեւնույն ժամանակ կենտրոնացումը չի նշանակում, որ այն կփոխարինի մյուս համայնքների դարոցները: Մեր նպատակն է ծնողներին ընտրության հնարավորություն տալ, որպեսզի նրանք հնարավորություն ունենան իրենց երեխաների համար ապահովել կրթության լավագույն պայմանները:

## Այցելող բժիշկներ

Այս շաբաթ մենք հանդիպեցինք Հայկական Բժշկական Միջազգային Կոմիտեի ներկայացուցիչների հետ (AMIC): Հանդիպման ընթացքում բժիշկներին ներկայացրեցինք Խաչթառակ համայնքի բուժկետի ծրագիրը եւ քննարկեցինք համագործակցության հնարավոր եղանակները: Բժիշկները այցելել են Խաչթառակի միկրոշրջանում ընդգրկված համայնքներ եւ նույնպես գտնում էին, որ այս համայնքներում առողջապահական համակարգի բացակայության խնդիրը շտապ լուծման կարիք ունի: Ուղեւորության ընթացքում նրանք հանդիպեցին նաեւ առողջապահության նախարարության տեղական մարմնի ղեկավարի հետ: Այս հարցին, թե AMIC-ը ինչով է կարող օգնել այս շրջանի գյուղացիներին վերջինս պատասխանել էր, որ նրանք պարզապես պետք է գան եւ աշխատեն այս համայնքներում:

Այս միտքը հավանության արժանացավ բժիշկների ինչպես նաեւ մեր կողմից: Մենք հավատացած ենք, որ այս նախաձեռնությունը կարող է դրական ազդեցություն ունենալ սահմանամերձ համայնքների առողջապահական համակարգի վրա: Այստեղ սորից մենք խոսում ենք երկակի ազդեցության մասին: Մի կողմից այցելող բժիշկը հնարավորություն կունենա իր տեսական եւ գործնական գիտելիքները կիրառել այնպիսի վայրերում, որտեղ մարդիկ զրկված են որակյալ բուժօգնությունից, մյուս կողմից հենց այս բժիշկների ներկայությունը համայնքում կունենա իր խրախուսող հոգեբանական արժեքը: Այս ուղեւորությունները, որոնք կազմակերպվելու են երկու շաբաթից մեկ ամիս տեւողությամբ հետաքրքիր փորձառություն կլինեն նաեւ բժիշկների համար, իրական պատկերացում տալով սահմանամերձ համայնքների բնակիչների կյանքի եւ առկա խնդիրների մասին: Այս ծրագիրը կարող է պարզորեն ցույց տալ այն գաղափարը, որը ընկած է «Հայաստան» համահայկական հիմնադրամի բոլոր նախաձեռնությունների հիմքում՝ մարդկանց միջոցով մարդկանց համար: